# Արձանագրություն 3

**Արարատի մարզի «Այգավանի Գ.Ղուկասյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար «20-ԱՄԴ-ԳՀԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնանշման հարցման միջոցով Դեղորայքի գնում կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 21.12.2018թ. ժամը 11:00-ին

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ**
**Հրանտ Հովհաննիսյան** – ՊՈԱԿ-ի գլխ. հաշվապահ
**Անդամներ**
**Հասմիկ Հովսեփյան** - ՊՈԱԿ-ի ուսուցչուհի
**Լուսինե Շահվերդյան** - ՊՈԱԿ-ի ուսուցչուհի

***Քարտուղար-գնումների համակարգող***

**Լուսինե Բազիկյան** - ՊՈԱԿ-ի գնումների համակարգման մասնագետ

**1. <u>ՀՀ Կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին</u>**

**1. Ընդունել ի գիտություն, որ**

1.1 ՀՀ Կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ 17.12.2018թ.-ին հարցում է ներկայացվել ՀՀ կառավարության պետական եկամուտների կոմիտե 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ «Արմինաշող» ՍՊԸ-ի և «Ավշար Պրոդ» ՍՊԸ-ի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 20.12.2018թ.-ին ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

1.2 «20-ԱՄԴ-ԳՀԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ գրաված մասնակից ճանաչված «Արմինաշող» ՍՊԸ-ի և «Ավշար Պրոդ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային փոստի միջոցով հրավերով սահմանված ժամկետում ներկայացվել են որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը.

-Հանձնաժողովի քարտուղարը ներկայացված փաստաթղթերը, ինչպես նաև գնահատման թերթիկների երկուական օրինակները տրամադրել է ընթացակարգի գնահատող հանձնաժողովին:

-Հանձնաժողովի անդամները գնահատման թերթիկների մեկական օրինակները ներկայացրել են հանձնաժողովի քարտուղարին:

**Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0**

2. **Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին**

Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել «20-ԱՄԴ-ԳՀԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները.

| Մասնակցի անվանումը | Հայտի գնահատականը |
|---|---|
| «Արմինաշող» ՍՊԸ | բավարար |
| «Ավշար Պրոդ» ՍՊԸ | բավարար |

-Մասնակցի կողմից ներկայացված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

**Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0**

3. **Հաստատել «20-ԱՄԴ-ԳՀԱՊՁԲ -19/1» գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին**

Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը՝ «20-ԱՄԴ-ԳՀԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարել «Արմինաշող» ՍՊԸ-ին՝ 1,2,3,4,5,6,7,9,10,11-րդ չափաբաժինների մասով, «Ավշար Պրոդ» ՍՊԸ-ին՝ 8-րդ չափաբաժնի մասով:

**Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0**

4. **Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին**

4.1 "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

4.2 Գնման ընթացակարգի արդյունքների հաստատման նիստից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում <<Վեդու բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի տնօրենին տրամադրել մրցույթի արդյունքների հաստատման նիստի արձանագրության պատճենը՝ օրենքով սահմանված կարգով պայմանագիր կնքելու նպատակով: Ընտրված մասնակցի հետ պայմանագիրը պետք է կնքվի հրավերով սահմանված կարգով. Այն է՝ ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիրը ստորագրելու և պատվիրատուին պայմանագրի ապահովումը ներկայացնելու պայմանով:

**Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0**

**5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին**

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագրերը կնքելու օրը ժամը 16:00-ին, «Այգավանի Գ.Ղուկասյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքում, հասցե՝ գ.Այգավան, Ս.Հովհաննիսյան փ. 43:

**Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0**

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Հրանտ Հովհաննիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Հասմիկ Հովսեփյան

_____ Լուսինե Շահվերդյան

Քարտուղար՝ _____ Լուսինե Բազիկյան